

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ

Մշակուած

ԿԵԴՐ . ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԷՆ

Վաւերացուած

ԱԶԳ . ԿԵԴՐ . ՎԱՐԶՈՒԹԵՆԷՆ

2183

371.2

ՈԼ-79

371.2
76-79

05 OCT 2011

375
[7] 7.0
012

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ԱՄԵՐԻԿԱՆԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ

Մշակուած
ԿԵԴՐ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԷՆ

Վաւերացուած
ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵՆԷՆ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

ST. NERSES SHNORHALI
LIBRARY

ARMENIAN PRELACY

27 AUG 2013

47.833

ՆԱԽԱԿԻԹԱՐԱՆ

Վեց տարուան դասընթացը: Իւրաքանչիւր տարի շաբաթական երեք դասաժամի զբաղում ամէն մէկ աշակերտի համար: Դասաժամը 30-45 վայրկեան:

Նախակրթարան մտնելու նուազագոյն տարիք՝ 16թը:

ՄԱՅՐՈՒՆԻ ԼԵԶՈՒ

Ա. ՏԱՐԻ. — Առաջին տարուան վերջը աշակերտը պիտի ճանչնայ այբուբենի բոլոր տառերը, ձեռագիր ու տպագիր, պարզ ու դժբարդ: Պիտի կարենայ կարդալ ու պատմել պարզ ու կարճ նախադասութիւններով փոքրիկ պատմութիւններ:

Կարգացուածէն որոշ մասեր ընդօրինակելու վարժութիւն:

Բ. ՏԱՐԻ. — Ընթերցում քիչ մը աւելի երկար նախադասութիւններով գրուած կտորներու, որ պէտքի առաջին տարուան ընթացքին ձեռք բերուած գրել-կարդալու վարժութիւնը լաւ մը հիմնաւորուի:

Գիրքէն բառեր ու նախադասութիւններ ընդօ-



4528-2011

րինակելու եւ ձեռագիրը կարդալու վարժութիւնն :

Տղոց ընտանի նիւթերու մասին ուսուցիչը կը կարգայ կարճ գրութիւններ եւ իմաստը բերանացի ամփոփել կուտայ աշակերտներուն :

Շատ սովորական եւ առաջին տարիէն սկսած յաճախ կրկնուող կարճ բառեր թելադրութեամբ գրելու վարժութիւնն :

Լաւ առողջանութեամբ արտասանութիւն մանկական ոտանաւորներու եւ արձակ կարճ կտորներու (առակ, պատմութիւն եւ այլն) :

Մաքուր լեզուով խօսակցութիւն՝ ընթերցման նիւթը ամփոփելու, դասին նկարը բացատրելու եւ կամ ծանօթ նիւթ մը (պտոյտ, խաղ, պարտէզ) նկարագրելու ձեռով :

Բառերը ճիշդ արտասանելու վարժութիւններ :

Կարճ նախադասութիւններ գրի առնելու փորձեր :

Գ. ՏԱՌԻ. — Ընթերցում աւելի երկար բառերու եւ ասոնցմով կազմուած նախադասութիւններու, որոնցմով ներկայացուած կ'ըլլան փոքրիկ պատմութիւններ, առակներ, նկարագրութիւններ եւ այլն :

Երկար բառեր ու նախադասութիւններ թելադրութեամբ գրելու վարժութիւն (ուղղագրութիւն) :

Օրուան դասի ընդօրինակութիւն, ամբողջ կամ մասամբ :

Պօսակցութիւն դասի եւ անոր մօտիկ նիւթերու մասին : Գործածուած բառերու հոմանիշներն ու հականիշները գտնելու փորձեր :

Տունը, պարտէզը, դպրոցը եւ անոնց մէջ գտնուող առարկաները, բոյսերը եւ կենդանիները ընդհանուր զիծերով բերանացի նկարագրելու վարժութիւններ :

Լաւ առողջանութեան եւ ճիշդ արտասանութեան վարժութիւններ :

Արտասանութիւն յարմար կտորներու :

Քերականական պարզ ծանօթութիւններ — դոյական, յօդ, բայ, ածական, դերանուն :

Գ. ՏԱՌԻ. — Ընթերցում աւելի երկար հատուածներու, — պատմութիւն, առակ, աւանդուիչ, ընութեան նկարագրութիւն, ճամբորդութիւն, կենսագրութիւն եւ այլն :

Կարդացածը ամփոփ պատմելու եւ պատմածը զրի առնելու վարժութիւններ :

Թելադրութիւն օրուան դասէն (ուղղագրութիւն) :

Բացատրութիւն բառերու կազմութեան :

Գտնել բառերու հոմանիշներն ու հականիշները :

Աշակերտներու առօրեայ կեանքին հետ կապուած երեւոյթներն ու դէպքերը քիչ մը մանրամասնօրէն նկարագրելու եւ գրի առնելու փորձեր :

Պարզ նախադասութիւններ անգլիերէնէ հայերէն թարգմանելու փորձեր:

Հոգածութիւն արտասանութեան ճշդութեան:

Արտասանութիւն դասագիրքէն եւ դուրսէն սորվուած ոտանաւորներու եւ արձակներու:

Քերականական պարզ ծանօթութիւններ— դոյականներու, բառերու, ածականներու, դերանուններու յօդերու տեսակները:

Մինչեւ հիմա դործնականօրէն ստացուած կէտադրական կանոններու ձեւակերպում ուսուցչի առաջնորդութեամբ:

Ե. ՏԱՐԻ.— Ընթերցում եւ բացատրութիւն, ամփոփում եւ ընդլայնում հայ հեղինակներու դրութեան քննելէ առնուած հատուածներու, պահպանելով բնաղիւրներու ոճը. նաեւ թարգմանական հատընտիր կտորներու (գրական—բանաստեղծական, նկարագրական, վիպական, ընկերաբանական, աշխարհագրական, պատմական, կենսագրական եւ այլն):

Թելագրութիւններ քանի մը դաս առաջ կարդացուած հատուածներէ (ուղղագրութիւն):

Խօսակցութիւններ դանազան նիւթերու մասին: Փոքրիկ վիճաբանութիւններ:

Հոգածութիւն արտասանութեան ճշդութեան եւ նախադասութիւններու կանոնաւորութեան:

Լաւ առդանութեամբ արտասանութիւններ՝ չափածոյ եւ արձակ:

Քերականութիւն.— Գոյականներու, բայերու, ածականներու, դերանուններու եւ յօդերու տեսակները: Պարզ, ածանցեալ եւ բարդ բառեր: Պարզ նախադասութիւններու վերլուծում: Կէտադրութիւն: Համաձայնութեան պարզ կանոններ:

Շարադրութիւն.— Կարճ, ինքնուրոյն գրութիւններ, որոնց մշակման մասին խօսուած ըլլայ դասարանին մէջ (նամակ, պատմութիւն, նկարագրութիւն եւ այլն):

Անգլիերէնէ հայերէնի թարգմանութեան փորձեր:

Զ. ՏԱՐԻ.— Ընթերցում եւ բացատրութիւն, ամփոփում եւ ընդլայնում հայ հեղինակներու, իւրաքանչիւր հեղինակ իր բնագրով, նաեւ թարգմանական հատընտիր կտորներու:

Թելագրութիւններ աշակերտներուն կողմէ բոլորովին չկարդացուած հատուածներէ (ուղղագրութիւն):

Խօսակցութիւն եւ վիճաբանութիւն զանազան նիւթերու մասին, ուղղագրութիւն դարձնելով լեզուի մաքրութեան եւ կանոնաւորութեան:

Հոգածութիւն արտասանութեան:

Լաւ առողջանութեամբ արտասանութիւններ՝
չափածոյ եւ արձակ :

Քերականութիւն .— Վերաքաղ բառերու կազմութեան : Համաձայնութեան կարեւոր կանոններու իւրացում եւ գործադրութիւն :

Շարադրութիւն .— Ինքնուրոյն զրութիւններ , որոնց նիւթը՝ ընդարձակ ըլլալու պարագային նախ մշակուի դասարանին մէջ , իսկ կարճ ըլլալու պարագային ամբողջովին ձգուի աշակերտին :

Անդրերէնէ հայերէնի թարգմանութիւն՝ փոքր զրութիւններու :

Ծանօթութիւններ դրուածքի մը կարեւոր բաժանումներու , վերնադիր , պարբերութիւններ , զլուխներ եւ այլն , նաեւ ոճի մասին :

Ա.ԶԳ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. եւ Բ. ՏԱՐԻ .— Ազգային եւ եկեղեցական տօներու առթիւ պղտիկներու հետաքրքրութիւնը յոհացնող չափով ծանօթութիւններ :

Գ. ՏԱՐԻ .— Կարեւոր դէպքեր ու դէմքեր ա-

ւանդական շրջանէն սկսած մինչեւ Հայկազեանի իշխանութեան վերջը :

Համապատասխան աշխարհագրական ծանօթութիւններ՝ քարտէսի գործածութեամբ :

Դ. ՏԱՐԻ .— Կարեւոր դէպքեր ու դէմքեր Արշակունեաց իշխանութենէն մինչեւ Բաղրատունեաց հարստութիւնը :

Համապատասխան աշխարհագրական ծանօթութիւններ՝ քարտէսի գործածութեամբ :

Ե. ՏԱՐԻ .— Կարեւոր դէպքեր ու դէմքեր Բաղրատունեաց եւ Ռուբինեանց շրջաններէն :

Հայաստանի բնական կազմը եւ հին վարչական բաժանումները : Քարտէսի կատարեալ ծանօթութիւն :

Հայաստանի Հանրապետութիւն :

Հայաստանի խորհրդայնացումը եւ կցումը Ռուսաստանին :

Զ. ՏԱՐԻ .— Կարեւոր դէպքեր ու դէմքեր վերջին դարերու ընթացքին , մինչեւ մեր օրերը : Հայ ազգի ծագումը՝ համաձայն քննական պատմութեան :

Արեւելեան եւ Արեւմտեան Հայաստանի բուսականութիւնը , հանքերը , արհեստները , ճարտարար-

ուեստը, հաղորդակցութեան միջոցները, բնակչութիւնը, զբաղումները:

ՀԱՅ ԵՐԳ

Ա. եւ Բ. ՏԱՐԻ.— Մանկական պարզ երգեր (խմբական), լսողութեամբ ուսուցում:

Գ. եւ Դ. ՏԱՐԻ.— Մանկական, ժողովրդական եւ ազգային ամէն կարգի երգեր առանձին եւ խումբով երգելու վարժութիւն, լսողութեամբ ուսուցում:

Ե. եւ Զ. ՏԱՐԻ.— Առանձին եւ խմբական, միաձայն, երկձայն եւ հնարաւորութեան պարադային նաեւ բաղմաձայն երգեր, մի'շտ լսողութեամբ ուսուցում:

ԼՐԱՅՈՒՅԻԶ ԴԱՍԸՆԹԱՅՔ

ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔՆԵՐ

Նախակրթարանի վեց դասարանները աւարտող սան-սանուհիները հայ հեղինակներու գործերուն հետ աւելի լայնօրէն ծանօթացնելու, ինչպէս նաեւ ընթացիկ հայ կեանքին հետ սերտօրէն կապելու

նպատակաւ, ուր որ հնարաւոր է, հայ վարժարանին որպէս լրացուցիչ դասընթացք, կը բացուին երկու տարուան լսարանական դասընթացքներ:

Ա. ՏԱՐԻ.— Շարաթական մէկ անգամ՝ երկու ժամ:


Ամէն դասի սկիզբի 30 վայրկեանը յատկացնել այդ շարժումն ընթացքին հայ կեանքի հետ սերտ առնչութիւն ունեցող կարեւոր դէպքերու ընթերցանութեամբ եւ զրոյցով՝ օգտուելով Հայաստանի եւ արտասահմանեան մամուլէն:

Մնացեալ ժամ եւ կէսը յատկացնել ընթերցանութեան, կարդալով կամ պատմելով Բաֆֆիի, Վարուժանի, Ահարոնեանի, Զօհրապի եւ ուրիշ հեղինակներու գլուխ գործոցներէն:

Բ. ՏԱՐԻ.— Շարունակութիւն Ա. տարուան:

Այս տարուայ երկրորդ կիսամեակի ընթացքին ամէն մէկ աշակերտ-աշակերտուհին պարտադրել աւելի խորունկ ուսումնասիրութեան նիւթ դարձնելու իր սիրած հեղինակներէն մին եւ պատրաստել անոր գործերու մասին գրախօսական մը առ նուազն 2000 բառերէ բաղկացած:

Բ. տարուայ վերջին այսպիսի ուսումնասիրութիւն ներկայացնողին, վարժարանի յանձնարարութեամբ՝ Կեդր. Ուս. Խորհրդի կողմէ կը արուի



500

Հասարանական Դասընթացներն աւարտողի վկայա-
կան :

Աղգային Կեդր. Վարչութիւնս յետ քննութեան
հաստատելով ներկայ ուսման ծրագիրը, կը յանձ-
նարարէ զանիկա դործադրել Ամերիկահայ դպրոց-
ներու մէջ :

ՆՇԱՆ Ա. ՔՀՆՅ. ՓԱՓԱԶԵԱՆ
Առաջնորդական Տեղապահ

Ի դիմաց Աղգ. Կեդր. Վարչութեան

Ատենադպիր Ատենապետ
ԴՈԿՏ. Մ. ԳԱՐՍԵԱՆԻ ՕԶԵԱՆ ԴՈԿՏ. Ս. ԱՔԳԱՐԵԱՆ

Յունուար 17, 1936
Նիւ Եորք

Սոյն Ուսումնական Ծրագիրը մշակուած ըլլա-
լով Կեդր. Ուսումնական Խորհրդի՝ եւ վաւերաց-
ուած Աղգ. Կեդր. Վարչութեան կողմէ, կը յանձ-
նարարենք դործածութեան դնել բոլոր Ամերիկահայ
աղղային դպրոցներու մէջ :

ԿԵԴՐ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ

Ատենադպիր
ԳԵՂԱՄ-ԳԵՂԱԿ

Ատենապետ
ԱՐԱՄ ՄՈՎՃԼ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն
ST. NERSES SHNORHALI
LIBRARY
ARMENIAN PRELACY

<< Ազգային գրադարան



NL0384608

47.833